ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 39

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.07.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 85 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի ավագանու 30.07.2019թվականի «Արենի համայնքի ավագանու 27.02.2019թվականի թիվ 22 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկաների օգտագործման կարգը և սականգները հաստատելու մասին» թիվ 85 որոշման մեջ ավելացնել նոր 5-րդ կետ.

5. Հաշվի առնելով Խաչիկ բնակավայրի հեռավորությունը և բնակավայրի առանձնահատկությունները, Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում շահագործվող Բելոռուս 82.1 տրակտորի համար սահմանել հատուկ պայմաններ.

1) Տրակտորով ծառայությունների մատուցումից գոյացած գումարի մեկ երորդը վճարվում է Արենիի համայնքապետարանի բյուջե՝ համապատասխան փաստաթղթերի հիման վրա՝ հաստատված Խաչիկ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից՝ իր պատասխանատվությամբ
2) Հավաքագրված գումարի մնացած մասը մնում է տրակտորիստին, որի մեջ ներառվում են.

ա) դիզելային վառելիքը,
բ) մատուցված ծառայությունների դիմաց տրակտորավարի ստացած եկամուտը,
գ) տրակտորի ընթացիկ վերանորոգման և սպասարկման ծախսերը ամբողջությամբ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ _____

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ _____